ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ ֆինանսների նախարարության 2019 թվականի հունիս ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2019 թվականի 1-ին կիսամյակում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 30009.8 մլն դրամ՝ պլանավորված 26900.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 11.6 տոկոսով կամ 3109.8 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 11.3 տոկոսով կամ 3054.1 մլն դրամով:

Հունիս ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 5771.5 մլն դրամ՝ պլանավորված 4300.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 34.2 տոկոսով կամ 1471.5 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 55.5 տոկոսով կամ 2061.0 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 134 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 10 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 38 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են 108.8 մլն դրամ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ, այդ թվում՝ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության 25 ստուգում՝ 103.9 մլն դրամ գումարով:

«Հարկային համակարգի բարեփոխումների» հայեցակարգի շրջանակներում իրականացված հսկողական միջոցառումների արդյունքում արձանագրվել են ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների թերհայտարարագրման 2 և ապօրինի ձեռնարկատիրական գործունեության իրականացման 1 դեպքեր:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 151 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 79-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 42-ը՝ հարկային հաշվանցումների և վերադարձի հիմնավորվածության, 8-ական՝ ակցիզային դրոշմանիշների շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման ու ապրանքների շրջանառության և ծառայությունների մատուցման ծավալների, ինչպես նաև իրացման փաստացի գների չափագրման և 14 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ թվով 3 հայցադիմում՝ 75.0 հազ. դրամ գումարով: Նույն ժամանակահատվածում ավարտվել է վճարման կարգադրության հայցերով 6 գործ՝ 147.0 հազ. դրամ գումարով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 243 վարչական գործով սահմանվել է 3.0 մլն դրամ վարչական տուգանք:

Հաշվետու ամսվա ընթացքում կարճվել է 1 քրեական գործ, որով պետությանը հասցված վնասը կազմել է 811.3 հազ. դրամ:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 6885 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 6148:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 65 պայմանագրեր:

Հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում հունիս ամսում կատարվել է վերադարձ 14 վարձու աշխատողի՝ 9.6 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով հաշվետու ամսում գործունեությունը նոր սկսող 54 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Հաշվետու ամսում ԱՀ կառավարություն է ներկայացվել «Ռոյալթի վճարողների կողմից խտանյութի իրացման շրջանառության առավելագույն սահմանաչափերը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի մարտի 12-ի N 122-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:

Ուսումնասիրվել են պետական կառավարման այլ մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերը և տրվել առաջարկություններ:

Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում հաշվետու ամսում նախարարության մեկ աշխատակից մասնակցել է ՀՀ ՊԵԿ ուսումնական կենտրոնի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին:

Երկու կառույցների միջև իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

Հունիս ամսում հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովին է ներկայացվել 1 դիմում-գանգատ, որը բավարարվել է:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

2019 թվականի 2-րդ եռամսյակում հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կազմակերպվել են 1892 տնտեսավարող սուբյեկտների ընդունելություն, որոնց արդյունքում պարզաբանվել են վերջիններիս հուզող հարցերը:

Հունիսի 18-ից մինչև 27-ը 426 հարկ վճարողների ներկայացուցիչների հետ կազմակերպվել են սեմինար-խորհրդակցություններ, որոնց ընթացքում ներկայացվել են հարկային հարաբերությունները կարգավորող օրենսդրական դրույթներում հուլիսի 1-ից կատարված փոփոխություններն ու հարկային հաշիվների էլեկտրոնային համակարգից օգտվելու ընթացակարգերը, ինչպես նաև տրվել պարզաբանումներ ներդրվող կենսաթոշակային բազմաստիճան համակարգի շրջանակներում կատարվող սոցիալական վճարների և կուտակային հատկացումների վերաբերյալ:

Հանրային իրազեկման աշխատանքները շարունակվել են նաև հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 30.1-ին հոդվածով սահմանված կարգով հրապարակվել են 2018 թվականի տարեկան արդյունքներով հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկերը:

Հունիս ամսվա ընթացքում հարկային մարմին է մուտքագրվել 215, ելքագրվել՝ 131 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 4 գրություն, որից 2-ը՝ էլեկտրոնային եղանակով: